

ՊԵՐՃ ԹԷՐԱՊԵԱՆ

ՍՐՏՅԱՒ ԿՈՉ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻՆ ՀԱՄԱՐ

ԳԱՀԻՐԷ - 2015

ՍՐՏՅԱԲ ԿՈՉ
ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒԻՆ ՀԱՄԱՐ

ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆ

ՍՐՏՅԱԲ ԿՈՉ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻՆ ՀԱՄԱՐ

ԳԱՀԻՐԷ - 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ	7
ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒՆ ՀՀ-Ի ՄԷՋ ՎՏԱՐԱՆԴԻ՝	15
ՏԻԱՐ ՍԵՐԳՕ ԵՐԻՅԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ	21
ՀԵՂԻՆԱԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ	27
ՏԻԱՐ ՍԵՐԳՕ ԵՐԻՅԵԱՆԻ Բ. ՊԱՏԱՍԽԱՆԸ	33
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՄԲ՝ ԼԵԶՈՒԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ (ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ)	35

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Բարեկամներէս և ծանօթներէս անոնք որ հայրենի հեռատեսիլի կայաններուն հաղորդումներուն կը հետեւին, մշտական սրտնեղութեամբ կ'արտայայտուին այդ հաղորդումներուն մէջ գործածուող աղաւաղուած հայերէնին մասին:

Շարունակական այս դժգոհութիւնը մղեց տողերս գրողը «Հայոց Լեզուն ՀՀ-ի մէջ Վտարանդի» խորագրով յօդուածը (տեսնել էջ 15) մամուլին յանձնելու, որպէս սրտցաւ կոչ հայրենիքի մէջ գործածուող հայերէնը «հայացնելու»:

Յօդուածը 2014 Փետրուարէն սկսեալ տպուեցաւ ութ տարբեր երկիրներու մէջ լոյս տեսնող հայերէն թերթերու կողմէ: Այդ երկիրներու տեղաբնակ բազմաթիւ հայորդիներ յօդուածին առնչութեամբ դրական արձագանգներ դրսեւորեցին, ինչ որ ցոյց կու տայ հայրենի ԶԼՄ-ներու գործածած լեզուին մասին գոյութիւն ունեցող համատարած դժգոհութիւնը:

* * *

Հաշուի առնելով որ յօդուածին մէջ անուղղակի կոչ կար յղուած ՀՀ մեծարգոյ նախագահ Տիար Սերժ Սարգսեանին, յօդուածը լոյս տեսնելէն յետոյ փորձեցի անկէ օրինակ մը հասցնել ՀՀ նախագահութեան, նա իսկ սփիւռքի նախարար յարգարժան տիկին Հրանուշ Յակոբեանին՝ յետոյ՝ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան Լեզուի Ինտիտուտի տնօրէն յարգարժան Տիար Վիկտոր Կատվալեանի միջոցով:

Երկու պարագաներուն ալ, տարբեր պատճառներով, յօդուածը չհասաւ նախագահութեան:

Գրքոյկին մէջ յիշուած պարագաներուն բերումով, որոնց մասին կրկնութենէ խուսափելու համար, հոս չեմ արտայայտուիր, 2015 Յունուարի վերջերուն յօդուածը կարելի եղաւ յանձնել ՀՀ նախագահի

աշխատակազմի ղեկավար յարգարժան Տիար Վիգեն Սարգսեանին:

Այնուհետև, շուրջ 15 օր յետոյ, ՀՀ Կրթութեան և Գիտութեան Նախարարութեան Լեզուի Պետական Տեսչութեան պետ Տիար Սերգօ Երիցեանէն 12 Փետրուար 2015 թուակիր ընդարձակ բացատրական գրութիւն մը կը ստանայի (տեսնել էջ 21):

Այդ գրութենէն ի յայտ կու գար թէ ան պատրաստուած էր առ ի գործադրութիւն ՀՀ նախագահութեան յօդուածին բովանդակութեան ծանօթանալու և անոր պատասխանելու յանձնարարականին:

Ընթերցողը պիտի նկատէ թէ այդ գրութիւնը լեզուագիտական ուսումնասիրութիւն մըն է որ սակայն ոչ մէկ համոզիչ պատասխան կու տայ խնդրոյ առարկայ յօդուածին մէջ արծարծուած հարցերուն:

Գրութեան վերջաբանին մէջ Տիար Սերգօ Երիցեան կը յայտնէր թէ իր ղեկավարած տեսչութիւնը «ակտիվ» ջանքեր կը գործադրէ «տերմինաշինութեան» խորհուրդ ստեղծելու մասին:

Ապա կ'աւելցնէ թէ ստեղծուելիք մարմինը ի շարս այլ քննարկումներու կրնայ զբաղիլ նաեւ տողերս գրողին առաջարկներով:

* * *

Տուեալ կացութեան մէջ, 12 Մարտ 2015 թուակիր նամակով մը (տեսնել էջ 27) Տիար Երիցեանի վերոնշեալ նամակին կը պատասխանէի առարկելով թէ յօդուածին մէջ եղած բոլոր նշումները կը վերաբերին հայերէնի մէջ արդէն իսկ գոյութիւն ունեցող բայց անտեսուած գեղեցիկ բառերու, որոնց փոխարէն անտեղիօրէն օտար բառեր կը գործածուին:

Նոյն նամակին մէջ յիշուած էր նաեւ թէ տերմինաբանական յանձնաժողովը ենթադրուած էր զբաղիլ նոր երեւոյթներ և ըմբռնումներ բնութագրող նորակերտ բառեր ստեղծելով, այլ ոչ թէ լեզուէն բռնագաղթուած հարազատ հայերէն բառերու «հայկական» կարգավիճակը վերականգնելով:

* * *

Տիար Սերգօ Երիցեան ամենայն համբերութեամբ և պարտաճանաչութեամբ 30 Մարտ 2015 թուակիր նամակով մը (տեսնել էջ 33) կը պատասխանէր թէ «տերմինների փոփոխություններ ի գօրու է անելու

միայն տերմինաբանական խորհուրդը, որն օրենսդրական անկատարության պատճառով, ցաւօք, չի կարող իր գործունեութիւնը ծաւալել ... եւայլն»:

* * *

Ընթերցողը պիտի նկատէ թէ 202ափուած նիւթին մասին փոխանակուած տեսակետները տարբեր «յաճախականութիւններու» վրայ են և իրարու չեն համապատասխաներ:

Տիար Սերգօ Երիցեանի պատասխաններով չհամոզուելով, ճարահատ՝ հեռաձայնով դիմեցի ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Տիար Վիգէն Սարգսեանի, ստուգելու թէ արդեօք առիթը ունեցած է խնդրոյ առարկայ երկու նամակները կարդալու: Տիար Սարգսեանի հաստատումէն ետք թէ զանոնք կարդացած է, հարցուցի թէ արդեօք համոզուած է այդ պատասխաններով: Տիար Սարգսեան դիտել տուաւ թէ Տիար Երիցեան իր նամակներուն մէջ հրաւիրած է տողերս գրողը, որ երբ Երեւան այցելէ՝ հանդիպում ունենայ իր հետ, քննարկելու համար բարձրացուած հարցերը: Տիար Սարգսեանին հարց տուի թէ ո՞ր կրնայ հասցնել Տիար Սերգօ Երիցեանի հետ իմ խօսակցութիւնս, աւելցնելով թէ այս հարցին մէջ շատ կարեւոր դեր կրնայ ունենալ նոյնինքն ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարը:

Թէեւ այս արտայայտութիւնը կ'ունենայի խոր համոզումով, սակայն միւս կողմէ յանցաւոր կը զգայի:

Արդարեւ, Տիար Վիգէն Սարգսեան, որ պատրաստուած և կարող անձնաւորութիւն մըն է, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարը ըլլալու կողքին, նոյն ատեն Յեղասպանութեան 100-րդ տարելիցի ոգեկոչումի միջոցառումներուն գլխաւոր համակարգողն էր և Մարտ 2015-ին կարելի է երեւակայել թէ ան որքան ծանրաբեռնուած կրնար ըլլալ: Կարճ լռութենէ մը յետոյ, Տիար Սարգսեան պատասխանեց ըսելով թէ «Այս հարցերը անցնին, յետոյ կը նայինք»:

Շնորհակալութիւն յայտնեցի և հեռաձայնային մեր կարճ գրոյցը իր աւարտին հասաւ:

Այժմ «Այդ հարցերը», այսինքն Յեղասպանութեան 100-րդ տարելիցի ոգեկոչումի միջոցառումները, բարձր մակարդակով անցած են մեր ժողովուրդին հպարտանք ներշնչելով և աշխատելաձեւի նոր չափանիշներ հաստատելով, որոնք փափաքելի է որ այսուհետեւ մնայուն

կերպով կիրարկուին հայրենի բոլոր գերատեսչություններին ներս, ներառեալ լեզուական գերատեսչությունները:

* * *

Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի ոգեկոչումի միջոցառումներուն Երեւան գտնուելով, առիթը ունեցայ իր պաշտօնատեղիին մէջ տեսակցելու ՀՀ ԿԳՆ Լեզուի Պետական Տեսչութեան Պետ Տիար Սերգօ Երիցեանի հետ, որ ջերմ մթնոլորտի մը մէջ ընդունեց տողերս գրողը:

Ան բացատրեց առկայ դժուարութիւնները և իր տեսչութեան առաքելութիւնը յաջողցնելու համար հարկ եղած «լծակներու» պակասը:

Նոյն օրերուն, առիթ եղաւ հանդիպելու ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի տնօրէն Տիար Վիկտոր Կատվալեանին, գործունեայ և ազնուական անձնաւորութիւն մը, որ իր կարգին լուսաբանութիւն տուաւ իր ղեկավարած ինստիտուտին գործունէութեան և դիմակալած դժուարութիւններուն մասին:

Հետաքրքրական էր իրմէ իմանալ թէ հայրենի ԶԼՄ-ներու լեզուի մակարդակը բարելաւելու մտահոգութեամբ ինստիտուտը խորհրդակցութեան հրաւիրած էր հեռատեսիլի բոլոր կայաններու տնօրէնները, պատրաստակամութիւն յայտնելով նաեւ հաղորդավարներուն համար վերապատրաստութեան դասընթացք մը կազմակերպելու:

Դժբախտաբար այս հրաւերին հեռատեսիլի կայաններու պատասխանատուներէն և ոչ մէկը ընդառաջած էր և ինստիտուտը չէր կրնար որեւէ ձեւով պարտադիր միջոցներու դիմել:

Այս բոլորին մէջ յուսադրիչ տեղեկութիւնը որ տրուեցաւ այն էր թէ ՀՀ ԳԱԱ-ի մէջ 20 Փետրուար 2015-ին գումարուած «Մեր լեզուն մեր հայրենիքն է» խորագրով գիտաժողովին ընթացքին առաջարկուած է ստեղծել հայերէնի բարձրագոյն խորհուրդ մը և կ'առաջադրուի որ այդ խորհուրդը գործէ ՀՀ կառավարութեան կից և լեզուական հարցերու մէջ ըլլայ կառավարութեան գլխաւոր խորհրդատուն:

Հետագային, մամուլին մէջ լոյս տեսած տուեալներէն ի յայտ կու գար թէ այդ խորհուրդին տրուելիք լեզուական այլեւայլ հարցերու վերաբերեալ իրաւասութիւններու շարքին նախատեսուած է նաեւ որ ան «պարբերաբար ներկայացնի անհարկի փոխառութիւնների և

օտարաբանությունների հայերեն համարժեքը...»

* * *

Հոս թերեւս տեղին պիտի ըլլար արձանագրել Արմէնքրեսի հրապարակած տեղեկութիւնը այն մասին թէ Հայերէնի Բարձրագոյն Խորհուրդը Հայաստանի մէջ գործած է տարիներ առաջ:

Ան կազմաւորուած է 1995-ի Հոկտեմբերին ՀՀ Լեզուի Պետական Տեսչութեան կից (Յաջորդելով 1994-ին լուծարուած «Նախարարաց Խորհուրդին առընթեր Տերմինաբանական Կոմիտէին»): Ան գործած է մինչեւ 2006 թուականը: Խորհուրդին նպատակն էր հայոց լեզուին վերաբերեալ լեզուաշինական աշխատանքները ղեկավարելը, ժամանակակից գրական հայերէնի հարստացումին ու զարգացումին նպաստելը:

* * *

Լուսաբանութեան այս բաժինը եզրափակելէ առաջ, հարկ է անդրադառնալ կարգ մը երեւոյթներու, որոնք առաջնորդեցին յօդուածին շուրջ փոխանակուած նամակագրութեան հրատարակութեան:

Տիար Սերգօ Երիցեանի առաջին նամակը ստանալէ և անոր պատասխան նամակ մը գրելէ յետոյ, զոյգ նամակներուն պատճէնները դրկեցի կարգ մը մօտիկ բարեկամներու, որոնք հետաքրքրութիւն ցուցաբերած էին յօդուածին հրատարակութեան առիթով և կը փափաքէին գիտնալ թէ ինչ է անոր անդրադարձը:

Այստեղ կը ներկայացնեմ կարգ մը անդրադարձներ:

Հայաստանէն ծանօթ մտաւորական մը պատրաստակամութիւն կը յայտնէր յօդուածը և զոյգ նամակները հրատարակել «ընդիմադիր մամուլի» մէջ:

Միացեալ Նահանգներէն ծանօթ հրապարակախօս բարեկամ մը կը գրէր հետեւեալը. «Լիովին կը բաժնեմ ձեր մտահոգութիւնները և տեսակէտները մեր մայրենի լեզուն անաղարտ պահելու վերաբերեալ:

Արդեօք կարելի՞ է այդ նամակագրութիւնը հրատարակել:»

Ամենէն հետաքրքրականը՝ Յունաստանէն բարեկամ մը Լիբանանի իր բարեկամին, որ ծանօթ լեզուաբան մըն է, կը դրկէր իրեն

դրկուած նիւթերը: Իսկ լիբանանահայ մտաւորականը այդ նիւթերը իր կարգին կը փոխանցէր Գանատայի իր բարեկամին: Վերջինս անձնապէս ինծի ծանօթ ըլլալով կապ կը պահէր հետս: Այստեղ կարգ մը մեջբերումներ կ'ընեմ իր գրութենէն. «Ամբողջութեամբ համաձայն եմ ըսածներուդ: Կրնանք աւելի ճնշում բանեցնել, նման նամակներով հետապնդել, միացեալ կեցուածք մը որդեգրել»:

«Եթէ մեր լեզուին մենք տէր չըլլանք, ո՞վ պիտի ըլլայ»:

Ասոնցմէ դուրս այլ անձեր եւս հետաքրքրուեցան յօդուածին ունեցած արձագանգով:

* * *

Վերոյիշեալներուն գրաւոր իսկ այլոց ալ բանաւոր կարծիքները ունենալէ յետոյ, ենթականերուն տեղեկացուցի թէ հարկ է որոշ ժամանակ մը սպասել, եւ եթէ որեւէ զարգացում չարձանագրուի, այդ ժամանակ միայն լուսաբանական գրութեան մը հետ կարելի է յօդուածը եւ անոր մասին փոխանակուած նամակագրութիւնը հրատարակել:

Կար, սակայն, նուրբ պարագայ մը, որ զիս կը մտահոգէր:

Տիար Երիցեանի նամակները, իրենց հանրային շահագրգռութիւն ներկայացնող բովանդակութեամբ հանդերձ, տողերս գրողին ուղղուած անձնական նամակներ կը համարուէին:

Հետեւաբար, երկընտրանքի մէջ էի թէ արդեօ՞ք ճիշդ պիտի ըլլար անձնական բնոյթ ունեցող նամակներ հանրութեան սեփականութիւնը դարձնել:

Այս երկընտրանքէն դուրս գալու համար, որոշեցի ուղղակի Տիար Սերգօ Երիցեանին դիմել, իրեն հարց տալու թէ անպատեհութիւն մը ունի՞ որ իր նամակները հրատարակուին:

Տիար Երիցեան հաւաստիացուց թէ ոչ մէկ անպատեհութիւն ունի:

Այս հաւանութիւնը ունենալէ յետոյ, որոշեցի յօդուածը եւ անոր մասին փոխանակուած նամակագրութիւնը ներկայ լուսաբանական գրութեամբ հրապարակել, որպէսզի հարցը աւելի լայն հասարակութեան մը հասանելի դառնայ:

* * *

Ընթերցողը նկատած պիտի ըլլայ թէ ՀՀ-ի մէջ լեզուական հարցերով զբաղող հայրենի պաշտօնատարները իրենց կարելին կ'ընեն, սակայն, ինչպէս կը պարզուի, անոնք չունին անհրաժեշտ օրինական դաշտին զօրավիգը:

Միւս կողմէ, կը մնայ, սակայն, անլուծելի առեղծուածը:

Մեր հայրենի հարազատները առանց ոեւէ մէկուն կարծիքին կարիքը զգալու, «անձնական նախաձեռնութեամբ» հայերէն լեզուէն ներս կը «հիւրասիրեն» օտար եւ անհարազատ բառեր:

Սակայն երբ այդ անհարազատ բառերը մատնացոյց կ'ընէք եւ կը թելադրէք զանոնք փոխարինել իրենց հայերէն համազօրներով, անմիջապէս կատարկեն, թէ այդ մասին միայն տերմինաշինական յանձնախումբը կրնայ որոշում կայացնել (եւ այս՝ ի չգոյէ նման յանձնախումբի):

Մաղթենք եւ յուսանք որ երկակի չափանիշի այս մօտեցումը շուտով փոխուի:

Նոյնպէս, մաղթենք որ գոյութիւն ունեցող օրինական խոչընդոտները շուտով հարթուին եւ հայոց լեզուի ոլորտէն ներս ստեղծուին անհրաժեշտ բոլոր կառոյցները, որոնք ունենան իրենց առաքելութիւնը իրագործելու համար հարկ եղած ամենալայն իրաւասութիւնները:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ՀՀ-Ի ՄԷՋ ՎՏԱՐԱՆԴԻ՝

Սփիւռքի մէջ ապրող եւ իր մայրենիին նախանձախնդիր արեւմտահայը, կոտտացող վերք մը ունի՝ իր լեզուին դժբախտ եւ անկար վիճակը: Արեւմտահայերէնի փրկութեան համար Սփիւռքի թէ հայրենիքի պատասխանատու մարմիններուն առած մասնակի եւ կարկտան քայլերը որեւէ տեղ չեն կրնար հասցնել, որովհետեւ աղէտը ահաւոր է, իսկ տրուած դարմանը՝ տկար եւ անզօր: Ի զուր չէ որ Միացեալ Ազգերու Կրթական, Գիտական Եւ Մշակութային Կազմակերպութիւնը (UNESCO) արեւմտահայերէնը դասած է վտանգուած լեզուներու շարքին:

Այս ցաւալի իրադրութեան առջեւ, Սփիւռքի մէջ ապրող, արեւմտահայերէնի նախանձախնդիր հայուն միակ սփոփանքը պիտի ըլլար, ՀՀ-ի մէջ տեսնել հայերէնի մակարդակ մը, որ արտացոլէր պետական հովանաւորութիւն վայելող լեզուի մը ամբողջ շքեղանքը: Լեզու մը, որ պետական հովանիին տակ շարունակէր պահել անցեալի իր գեղեցկութիւնն ու զարգանար ժամանակակից նոր երեւոյթներ եւ ըմբռնումներ արտայայտող նորովի գեղակերտ բառերով:

Իրականութիւնը, սակայն, բոլորովին տարբեր է:

ՀՀ-ի լրատուամիջոցներուն հետեւողը կը շշմի ի տես բոլոր մակարդակներու վրայ հայերէնի մէջ ընդելուզուած օտար բառերու քանակին:

Անհատներու կողմէ օտար բառերու գործածութիւնը կրնայ այլեւայլ պատճառներ ունենալ: Օրինակ՝ ենթակային հայերէնի իմացութեան պակասը, օտարոտի բառեր գործածելով դիմացինը տպաւորելու միամիտ ճիգը, կամ մեզի անծանօթ այլ ենթակայական պատճառներ:

Սակայն երբ օտար բառեր բանաւոր եւ գրաւոր կերպով առատօրէն գործածուին պաշտօնական կառոյցներու գլուխը կանգնած պատասխանատուներու կողմէ, որոնց առաջնահերթ պարտականութիւնն է

ազգայինը պահելը, պահպանելը եւ զարգացնելը, պարագան բոլորովին կը տարբերի:

Արդարեւ, այդ պատասխանատուները եթէ նոյնիսկ իրենք անձնապէս անտարբեր են մայրենիին հանդէպ, իրենց հանգամանքներուն բերումով պարտաւոր են մաքրամաքուր հայերէնով արտայայտուիլ, այլապէս կը համարուին իրենց պարտականութեան մէջ թերացած պաշտօնատարներ, որոնք պարտաւոր են հաշիւ տալ իրենց ապագա-գային կեցուածքին համար:

* * *

Շարունակելէ առաջ, հարկ է նշել թէ տողերս գրողը լեզուագիտական պատրաստութիւն չունի եւ աւելորդ յաւակնութիւններ չունի, իր նախակրթարանի հայերէնով այլոց հայերէնի դասեր տալու: Զինք ներկայ գրութեամբ արտայայտուելու մղողը, մեր մայրենիին հանդէպ իր տածած սէրն է եւ մեր լեզուն գոնէ մեր հայրենիքին մէջ անաղարտ տեսնելու նախանձախնդրութիւնը:

Արեւելահայ մեր հարազատներուն մօտ մեր լեզուն օտար բառերով «զարդարելու» աւանդոյթը հինէն կու գայ, ռեսպուբլիկայի եւ մինիստրներու օրերէն: Կ'ակնկալուէր որ անկախութենէն ասդին ստեղծուած գերիշխան ազգային պետութեան առկայութեան՝ մեր լեզուն արմատապէս ձեռքազատուէր օտար բառերէ:

Սակայն, օտար բառեր գործածելու այդ աւանդոյթը յամառօրէն կը պահպանուի, սկսելով պետական ամենաբարձր մակարդակէն: Կը բաւէ միայն ակնարկ մը նետել ՀՀ-ի հետեւեալ նախարարութիւններուն անուններուն վրայ: Այսպէս. գոյութիւն ունին, Աշխատանքի եւ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ (փոխան Ընկերային-ի) նախարարութիւն, ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ (փոխան Տնտեսութեան) նախարարութիւն, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ (փոխան Ուժանիւթի) եւ Բնական Պաշարների նախարարութիւն, ՄՊՈՐՏԻ (փոխան Մարզական-ի) եւ Երիտասարդութեան Հարցերի նախարարութիւն, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ (փոխան Փոխադրութեան) եւ Կապի նախարարութիւն ու ՖԻՆԱՆՍՆԵՐԻ (փոխան Ելեւմտական-ի) նախարարութիւն:

Ինչո՞ւ մեր նախարարութիւնները հայերէնին անհարազատ այս անունները պէտք է կրեն: Ո՞վ պիտի տայ այս հարցադրումին համոզիչ պատասխանը:

* * *

Այժմ անցնինք շախմատի կամ ճատրակի բնագաւառին:

Ուրախալի է որ ՀՀ-ի մէջ ճատրակին վայելած պետական ամենաբարձր մակարդակի հովանաւորութեան շնորհիւ Հայաստանը դարձած է ճատրակի համաշխարհային ախոյեան, որուն հաւաքականը կը յաղթէ Զինաստանի, Հնդկաստանի եւ Ռուսական Դաշնութեան նման հսկաներու ճատրակի հաւաքականներուն:

Ճատրակը դարձած է Հայաստանի ազգային խաղը, բայց երբ այդ ազգային խաղին մասին կը խօսուի, կը գործածուին ապազգային եզրեր, ինչպէս ճատրակիստ, շախմատիստ կամ չէմպիոն: Կարծէք յատուկ ճիգ մը կ'ա ԻՍՏ մասնիկին հայկական անձնագիր տալու: Ինչո՞ւ չենք գործածեր ճատրակորդը եւ շախմատորդը՝ յար եւ նման լուրորդին, հեծանուորդին, օդանաւորդին, անկարգելորդին եւայլն: Իսկ չէմպիոնը, ուղղակի վիրաւորանք է ուղղուած մեր փառաւոր եւ հոգեհարազատ ախոյեանին:

* * *

Անցնինք այլ օրինակի մը:

Մամուլին մէջ կը կարդանք թէ ՀՀ Սփիւռքի Նախարարութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ «ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ եւ ԲԱՆԿԻՐՆԵՐԻ համահայկական երկրորդ համաժողովը», որին մասնակցում էին Սփիւռքից ժամանած, ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ ինչպէս նաեւ Հայաստանի Կեդրոնական ԲԱՆԿԻ, առեւտրային ԲԱՆԿԵՐԻ ապահովագրական եւ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ընկերութիւնների, վարկային կազմակերպութիւնների ղեկավարներ եւ ներկայացուցիչներ:

Այս համաժողովը Սփիւռքի նախարարութեան բոլոր միւս նախաձեռնութիւններուն նման շատ գեղեցիկ եւ գնահատելի նախաձեռնութիւն մըն է, բացառութեամբ իր խորագրին մէջ անկոչ հիւրի պէս անտեղիօրէն սպրդած «ֆինանսիստ»ներուն եւ «պանկիր»ներուն, անկախաբար համաժողովին մասին հրապարակուած լրատուութեան մէջ տեղ գտած այլ օտար բառերէն: Տողերս գրողը այս օտար բառերուն հայերէն համագօրը «յայտնաբերելու» ճիգով դիմեց համացանցի վրայ տեղադրուած «Նայիրի» հայերէնի ուղղագրիչ բառարանի կայքէջին բառարաններու հաւաքածոյին:

Այդ ճիգին արդիւնքը եղաւ այն, որ գտնուեցան «ֆինանսիստ»ին կամ՝ աւելի ճիշդը՝ «ֆինանսիէ»ին համագոր հայերէն երկու գեղեցիկ բառեր. մէկը ելեւմտագէտն է, միւսը՝ դրամավարը, որոնց երկուքն ալ կրնան արժանապատիւ կերպով, ճշգրտօրէն եւ հարազատօրէն փոխանցել օտարոտի «ֆինանսիստ»ով ըսել ուզուածը:

«Բանկիր»ին պարագան աւելի հեշտ է: Անոր հայերէն համագորը սեղանաւորն է: Կոստանդնուպոլսոյ մէջ անցեալին գործող շատ մը ամիրաներ սեղանաւորներ էին: Այս առիթով աւելորդ պիտի չըլլար աւելցնել թէ ոչ մէկ անպատեհութիւն կայ «բանկ» բառին տեղ գործածելու հայերէն դրամատուն բառը, - Հայաստանի Կեդրոնական Դրամատուն (փոխան բանկի):

Կը մնայ «աուդիտորական» ընկերութիւններուն հարցը:

Գաղտնիք չէ որ «աուդիտորական»ին արմատը տառադարձուած «auditor» բառն է, որուն հայերէն համագորներն են հաշուեքննիչը կամ հաշուետէսը: Հետեւաբար, աուդիտորականին տեղ կարելի է աւելի դիրահունչ եւ սրտամօտ հաշուետեսականը գործածել:

Ներկայ հատուածին սկիզբը ներկայացուած լրատուութիւնը միայն հայերէն բառապաշարով վերախմբագրելով, պիտի ստացուի հետեւեալը.

«ՀՀ Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ ելեւմտագէտների (կամ դրամավարների) եւ սեղանաւորների համահայկական երկրորդ համաժողովը, որին մասնակցում էին Սփիւռքից ժամանած ելեւմտագէտներ, ինչպէս նաեւ Հայաստանի Կեդրոնական Դրամատան, առեւտրային դրամատների ապահովագրական եւ հաշուետեսական (կամ հաշուեքննչական) ընկերութիւնների, վարկային կազմակերպութիւնների ղեկավարներ եւ ներկայացուցիչներ»:

* * *

Ամէն անգամ որ հայրենի լրատուամիջոցներու մէջ վերը նշուածներուն նման օտարաբանութիւններու հանդիպինք, ակամայ կը վերյիշենք սփիւռքահայ զուարթախոհ մտաւորական բարեկամուհիի մը Հայաստանէն իր առաջին այցելութենէն վերադարձին ունեցած մէկ արտայայտութիւնը, ուր մօտաւորապէս կ'ըսէր. «Ուրախ եմ որ ֆրանսերէն եւ անգլերէն գիտեմ: Ատիկա օգնեց ինծի որ հասկնամ Երեւանի

մէջ խօսուած հայերէնը»:

* * *

Բարեկամներ յաճախ դիտել կու տան թէ չի բաւեր միայն քննադատելը, հարկ է նոյն ատեն լուծումներ առաջարկել:

Մեծագոյն ցաւը այն է, որ երկար տարիներէ ի վեր հայերէնի պատկառելի լեզուագէտներ շունչ կը հատցնեն հայկական հեռատեսիլի կայաններէն զանազան հաղորդաշարերով՝ բացատրելով թիւրն ու թերին, փորձելով բարելաւել հայրենիքի մէջ գործածուող մայրենիի մակարդակը: Արդի՞նք, գրեթէ ոչ մէկ դրական արձագանգ, կարծեք ըսուածները ուղղուած ըլլային արտասահմանի՝ այլ ոչ թէ հայրենիքի հայութեան:

Ի՞նչ է այս քրոնիկ ցաւին լուծումը:

Առաջարկուելիքը կրնայ անսովոր թուիլ, այսուհանդերձ կ'արժէ փորձել:

ՀՀ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան, շնորհիւ իր տարած ազնիւ, նուիրեալ եւ նպատակաւաց գործունէութեան (վկայ Հայաստան հաստատուող սուրիահայերու հանդէպ իր ցուցաբերած հարազատի վերաբերումը), շատ մը սփիւռքահայերու կողմէ իրաւամբ կը դիտուի նաեւ որպէս սփիւռքահայութեան նախարարը ՀՀ-ի մօտ:

Հետեւաբար, Հայոց Լեզուի մեր հարցին պարագային իբր վերջին ապաւեն թերեւս կարելի է դիմել իրեն:

Արդարեւ, ՀՀ Սփիւռքի նախարարութեան յայտարարութիւններու մէջ կը խօսուի հայապահպանումի, հայրենադարձութեան եւ հայադարձութեան մասին: Պիտի խնդրէինք սփիւռքահայութեան նախարարէն, որ այս բոլորին կողքին իր ելոյթներուն ընթացքին (որոնք յաճախ կը բարձրանան գեղարուեստական կատարումի մակարդակին), խօսի նաեւ հայԵրէնադարձի մասին, որպէս հայապահպանումի կարելոր եւ անշրջանցելի գործօն:

Եթէ Սփիւռքի նախարարութիւնը ձեռնարկէ հայԵրէնադարձի արշաւի մը, հայրենի այլ նախարարութիւններ եւ գերատեսչութիւններ՝ որոնց առաջնային պարտականութիւններուն ծիրին մէջ կ'իյնայ ազգային հոգեմտաւոր ժառանգութեան հարցերով զբաղիլը, թերեւս բարի նախանձէ մղուած (թէկուզ եւ չար նախանձէ...), իրենք եւս միանան հայԵրէնադարձի արշաւին:

Այս միահամուռ արշալը կրնայ օգնել որ Հայոց Լեզուն հայրենի հողին վրայ, իր վտարանդիի կարգավիճակը թօթափելով, բազմի իրեն արժանի պատուանդանին վրայ:

Այս ուղղութեամբ որպէս առաջին քայլ ամենագործնականը այն պիտի ըլլար, որ ՀՀ Սփիւռքի նախարարը առաջարկ ներկայացնէ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին, որ հրամանագիր մը ստորագրէ փոխելու եւ հայացնելու ՀՀ այն նախարարութիւններուն անունները, որոնք օտարոտի են:

ՀՀ նախարարութիւններուն անունները հայացնելու նախագահական նման իմաստուն որոշում մը լաւագոյն ազդանշանը պիտի ըլլար հայԵրէնադարձի արշալին մեկնարկին եւ երաշխիքը անոր յաջող ելքին:

Այս բոլորին կրնայ նպաստել նաեւ այն բարեդէպ զուգադիպութիւնը, որ նախագահ Սերժ Սարգսեան ունի բանասիրական կազմաւորում:

Չենք գիտեր թէ Հայոց Լեզուի մասին մեր ունեցած բարի ակնկալութիւնները արդեօ՞ք պիտի իրականանան, թէ՞ անոնք պիտի դատապարտուին արթուն երագողներու մտքերուն մէջ ապրելու, որպէս մնայուն յաճախանք:

Ամէն ինչ կախում ունի ՀՀ-ի գերագոյն իշխանաւորներուն՝ մեր մայրենիին հանդէպ ունեցած նախանձախնդրութենէն:

Գահիրէ

ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆ

ՏԻԱՐ ՍԵՐԳՕ ԵՐԻՅԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հարգելի՛ պարոն Թերզյան

Նախ ուրախ եմ, որ հանձնառություն ունեցա ՀՀ նախագահ պարոն Սերժ Սարգսյանի կողմից՝ ծանոթանալու իրեն փոխանցված նամակի բովանդակությանը և արձագանքելու:

Իսկ այժմ՝ ըստ էության:

Առաջին հերթին թույլ տվեք մեր համերաշխությունը հայտնել Ձեզ՝ մայրենիի հանդեպ հանդես բերած Ձեր նվիրումի և այն անաղարտ տեսնելու նախանձախնդրության համար:

Լեզուն բարդ ու հարափոփոխ մի համակարգ է, հանգամանք, որը պայմանավորում է նրա անցյալը, ներկան ու ապագան: Պատմական հոլովույթում լեզուն շարունակ հարստացնում է իր բառային կազմը, ասել է թե՛ բառապաշարը: Հայերենն այս առումով ունեցել է 3 գոյավիճակ՝ հին հայերեն կամ գրաբար, միջին կամ կիլիկյան հայերեն և աշխարհաբար՝ իր արևմտահայերեն և արևելահայերեն ճյուղերով: Յուրաքանչյուր գոյավիճակում հայերենի բառապաշարը հարստացել է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միջոցներով: Ներքինն այն է, երբ լեզուն հարստանում է սեփական բառակազմական միջոցներով, ասել է թե՛ իր արմատներով ու ածանցներով կազմում է նոր բառեր: Մեկ օրինակ՝ արդի արևելահայերենից: Երբ մեկ տասնամյակ առաջ Հայաստանում հեռախոսային ամսական վարձավճարը սկսեցին գանձել ըստ բաժանորդի խոսացած բույներին, անհրաժեշտություն առաջացավ նոր բառակերտման: Անմիջապես հայերեն **բոսյե** և **վճար** արմատների միավորումից ստեղծվեց շատ բարեհունչ և հասկացությունը ճշգրիտ բնութագրող բառը՝ **բոսյեավճար**: Նման հազարավոր օրինակներ կարելի է բերել: Մակայն անցնենք առաջ:

Բառապաշարի հարստացման արտաքին ուղին այն է, երբ լեզուն այլ լեզուներից փոխ է առնում այդ շրջանում հանրային կյանքի նոր իրակությունները բնութագրող բառեր: Փոխառություն կատարելը

բնորոշ է եղել հայերենի բոլոր գոյավիճակներին: Այսօր ոչ մեկը տարակուսանք չի հայտնում *հրապարակ, պայուսակ, հրեշ, հրաման, աշխարհ...* պարսկերեն, *եկեղեցի, կղերական, Պողոս, Պետրոս, Մարտիրոս...* հունարեն բառերի հայերենյան իրողություն լինելու փաստի նկատմամբ: Բավական է միայն նշել, որ ըստ մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանի՝ դեռևս 5-րդ դարում հայերենը բառեր է փոխառել պարսկերենից (1460 բառ), հունարենից՝ մոտ 700, որից միայն 22 ածանց, արաբերենից՝ մոտ 400՝ հիմնականում դեղամիջոցների և բույսերի անուններ... Օրինակները կարելի է բազմապատկել: Սակայն այստեղ՝ մի միջանկյալ դիտարկում: Հնդեվրոպական նախալեզվից կամ մայր լեզվից հայերենը ժառանգել էր ընդամենը 998 բնիկ արմատ (*հայր, մայր, հաց, եղբայր* և այլն): Եթե այս թիվը համադրում ենք պարսկերենից փոխառյալ 1460-ի հետ, ապա հայերենի զարգացման հետագա ընթացքում մեր լեզուն պետք է ողողված լիներ պարսկաբանություններով: Սակայն, ինչպես միշտ, լեզուն դրսևորեց ինքնամաքրման հատկություն: Ի՞նչ կատարվեց. պարսկերենի լեզվական միավորները չտվեցին իրենց ածանցյալները: Բնիկ հայերենի 998 արմատների շնորհիվ՝ այսօր արդի հայերենում հաշվվում է շուրջ 10 000 արմատ:

Մեր այս նախաբանը բնավ ուսուցողական թող չթվա: Պարզապես Ձեր նամակի (ի դեպ, նամակ-ն էլ է պարսկերենից) մտահոգություններին առավել հանգամանալի պատասխանելու համար կատարեցինք այս լեզվաբանական համառոտ հետահայացը:

Մեծանուն հայագետ Մանուկ Աբեղյանը, փորձելով պատասխանել «Ինչի՞ց է առաջանում լեզվի փոփոխությունը» առաջադիր հարցին, չի մերժում անհատների գիտակցական ներգործությունը լեզվի զարգացման գործընթացում, ինչպես նաև օտար լեզուների ազդեցությունը՝ եզրակացնելով, որ «...այդ ամենը շատ չնչին է լեզվի այն դանդաղ, ակամա և անգիտակից փոփոխության դիմաց, որին շարունակ ենթակա են լեզվի բոլոր իրակությունները: Այս փոփոխության իսկական պատճառն ուրիշ բան չէ, բայց եթե լեզվի սովորական գործունեությունը, որով սովորում և գործածում ենք լեզուն: ...և ինչպես օրգանական բնության զարգացման մեջ, նույնպես և լեզվի զարգացման մեջ ծագած նոր լեզվական իրակությունների ավելի կամ պակաս նպատակահարմարությամբ որոշվում է նրանց պահպանությունը լեզվի մեջ կամ կորուստը» (Տե՛ս Մ.Աբեղյան, *Հայոց լեզվի*

տեսություն, Երևան, 1965 թ., էջ 12-13): Մենք ևս չենք մերժում անհատների՝ լեզվի զարգացման նկատմամբ գիտակցական ներգործության թեզը: Սակայն լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում այդ ներգործություն կոչվածը տարբեր բնույթի և աստիճանի է եղել: Անհերքելի փաստ է, որ լեզվի կառուցվածքում ամենաշարժունը բառապաշարն է և սրանով իսկ ամենախոցելին: Ձեր բերած օրինակներն առավելապես վերաբերում են բառապաշարային իրողություններին, իսկ ավելի ճշգրիտ՝ բառապաշարի տերմինային (եզրույթային) շերտին: Դրան դեռ կանդիդատնանք: Սակայն մենք կամենում ենք խնդրո առարկան մի փոքր ընդլայնել:

Այժմ՝ առավել առարկայական: Մենք միանգամայն համամիտ ենք Ձեր այն մտահոգությանը, որ մեր մամուլը, հեռուստա- և ռադիոթերը, մեղմ ասած, չի փայլում անադարտ հայերենով. ավելին՝ աղավաղվում է ինչպես բառն ընդհանրապես, այնպես էլ քերականական, ձևաբանական, ոճական և այլ իրողություններով պայմանավորված խոսքը: Նախ՝ ԲԱՌԻ մասին:

Հասկացությունների (բառերի) հայերենացման առնչությամբ մենք որդեգրում ենք հետևյալ մոտեցումը: Եթե հասկացության դիմաց հնարավոր է հայերեն բառակազմական միջոցներով (արմատներով և ածանցներով) ստեղծել համարժեք այնպիսի բառ, որը լինի բարեհունչ, բայց ամենակարևորը՝ Հայաստան պետության քաղաքացու մտքին ու սրտին հարազատ, ապա մենք կողջունենք նման բառի մուտքը մեր բառապաշար: Օրինակ, խորհրդային շրջանից եկող համագործակցական բառապաշարի այնպիսի բառեր, ինչպիսիք էին **սովետ**, **դեղեգատ**, **ստրատեգիա**, **տակտիկա** և այլ բառեր անկախության շրջանում փոխարինվեցին արևմտահայերեն հաջող համարժեքներով՝ **խորհուրդ**, **պատգամավոր**, **ռազմավարություն**, **մարտավարություն**: Հատկապես անկախության շրջանում արևմտահայերենից արևելահայերենի բառապաշար մուտք գործեցին հարյուրավոր հասկացությունների համարժեքներ կամ պարզապես նոր բառեր, որոնք արտացոլում էին հասարակարգային նոր իրողությունները, ինչպես՝ **խոսնակ**, **արհեստավարժ**, **ահաբեկիչ**, **ապաստաճ**, **գերադաճ**, **գովազդ**, **ընկերաբան**, **ընկերվար**, **ընտրատեղամաս**, **ընտրարշավ**, **ընտրաքարոզ**, **ժողովրդավար**, **ծավալապաշտ**, **կարգախոս** և այլն: Այլ հարց է, թե սրանցից որոնք ավել կամ պակաս չափով կամրապնդվեն լեզվում: Երբեք և ոչ մի ժամանակաշրջանում որևէ մեկի թելադրանքով

կամ այլ եղանակներով ԲԱՌԸ չի ամրակայվի հանրության բառապաշարում. կամրակայվի, թերևս, բառարանում, բայց ոչ մարդկանց շուրթերին: Այստեղ պատճառները բազում են, որն այլ ձևաչափ է պահանջում: Բայց ամենաառաջնայինը, թերևս, եթե կարճառոտ լինենք, տվյալ ժամանակաշրջանում ապրող հանրության կենսամտածողությունն է:

Հիմա՝ ԽՈՍՔԻ մասին: Այո՛, խոսքն էլ առանձին դեպքերում բարվոք վիճակում չէ: Բայց այստեղ մեղավորը հայերենացման թերացումը չէ, ինչին արդեն անդրադարձանք: Ժողովրդական մի ասացվածք կա՝ «Խոսիր՝ տեսնեմ՝ ո՛վ ես»: Ուրեմն խոսքը մաքուր և անաղարտ պետք է լինի թե՛ պաշտոնյայի, թե՛ ուսուցչի ու աշակերտի, թե՛ լրագրողի ու ուսանողի կամ դասախոսի շուրթերին: Եվ այնպես պետք է լինի, որ, լայն իմաստով, ամեն մի կիրթ մարդու սիրտը ցավի յուրաքանչյուր օտարաբանության համար, քանի որ ԽՈՍՔԸ նաև ապրելակերպ է, ՏԵՍԱԿ:

Որպես մեր խոսքի ամփոփում՝ հավելենք, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչությունը ակտիվ ջանքեր է գործադրում՝ լայն գործառույթներով տերմինաշինության խորհուրդ ստեղծելու համար: Նման կառույց կա եվրոպական բազում երկրներում, ընդ որում՝ ամենաբարձր իրավունքներով ու պարտականություններով: Տերմինաշինության խորհրդի կազմում կրնդգրկվեն լավագույն լեզվաբաններ, տարբեր տերմինաշեռտեր ներկայացնող մասնագետներ ինչպես Հայաստանի Հանրապետությունից, այնպես էլ Սփյուռքից: Այս խորհրդի առաքելությունը պիտի լինի ուշիուշով հետևելու լեզվում ընթացող բազմաշերտ գործընթացներին, մասնավորապես՝ կանոնակարգելու համագործածական բառապաշարը՝ այն գերծ պահելով օտարաբան ներթափանցումներից, կերտելու հայերենի բառաստեղծման ավանդույթներին համահունչ նոր բառեր:

Այդ մարմինը պատրաստ կլինի ցանկացած քննարկումների, այդ թվում և այն, ինչ առաջարկում եք Դուք՝ Ձեր մտահոգությունների տեսքով՝ կապված կոնկրետ եզրույթների հետ: Հենց առաջիկայում ստեղծվելիք տերմինաշինության խորհուրդն էլ ծանրութեթև կանի բոլոր իրողությունները, կողմ և դեմ տեսակետներն ու կարծիքները, և ամենակարևորը՝ վերջնական արդյունքում մեր լեզուն կհարստանա հայաշունչ բառերով, որոնք կտրված չեն լինի մեր ժողովրդի լեզվամտա-

ծողությունից, առկա բնականոն լեզվաշինական գործընթացներից և, որ ոչ պակաս կարևոր է՝ մեր լեզվական ավանդույթներից:

Խորհրդի այս բազմաշերտ գործունեությունը կամփոփվի մեկամյա կամ երկամյա ժողովածուում, որը ենթադրում ենք կդառնա լրագրողի կամ պետական այրի սեղանի գիրքը:

Կրկին ընդունեք մեր երախտագիտությունը և համերաշխությունը Ձեր մտահոգությունների համար: Հընթացս հավելենք, որ Հայաստան այցելելիս հյուրընկալվեք Լեզվի պետական տեսչությունում, որտեղ առավել համակողմանի կարող ենք խոսել այս ամենի մասին:

Հարգանքներով՝

ՀՀ ԿԳՆ Լեզվի պետական տեսչության պետ
Սերգո Երիցյան

12.02.2015 թ.

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Գահիրե, 12 Մարտ 2015

Մեծայարգ Տիար Սերգո Երիցեան
ՀՀ Կրթութեան և Գիտութեան Նախարարութեան
Լեզուի Պետական Տեսչութեան Պետ
Երեւան

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ՎՏԱՐԱՆԴԻ»

Մեծայարգ Տիար Երիցեան,

Այսու կը փափաքէի Ձեզի տեղեկացնել, թէ շնորհակալութեամբ ստացած եմ վերոնշեալ խորագրով յօդուածիս մէջ արծարծուած հարցերուն վերաբերեալ Ձեր 12 Փետրուար թուակիր ե-նամակին կցուած բացատրական ընդարձակ գրութիւնը:

Հարկ է նշել թէ Ձեր գրութիւնը միաժամանակ թէ՛ գոհունակութիւն առթեց, թէ՛ յուսախաբութիւն:

Գոհունակութեան պատճառը այն է որ Ձեր բացատրականը գրուած է, ըստ Ձեր նշումին, իբր հետեւանք ՀՀ նախագահ Պր. Սերժ Սարգսեանի կողմէ յօդուածիս բովանդակութեան ծանօթանալու և անոր արձագանգելու յանձնարարականին:

Խնդրոյ առարկայ յօդուածը 27 Յունուար 2015-ին յանձնուած էր ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար յարգարժան Տիար Վիգէն Սարգսեանին, նոյն օրը իր ու ՀՀ Սփիւռքի և Մշակոյթի յարգարժան նախարարուհիներուն հետ այլ հարցերու շուրջ կայացած խորհրդակցական հանդիպումի մը աւարտին:

Այդ հանդիպումէն 15 օր յետոյ՝ 12 Փետրուար 2015-ին ուսումնասիրական բնոյթ ունեցող Ձեր գրութեամբ եղած շուտափոյթ արձագանգը, ինքնին լուրջ և յոյժ գնահատելի գործելակերպի մը ցուցանիշն է:

* * *

Ձեր գրութեան առթած յուսախաբութեան պատճառներուն անդրադառնալէ առաջ, պիտի ուզէի Ձեզի փոխանցել կարգ մը տեղեկութիւններ, որոնք կրնան լուսաբանիչ դեր ունենալ:

«Հայոց Լեզուն Հայաստանի Հանրապետութեան Մէջ Վտարանդի» խորագրով յօդուածը լոյս տեսած է արտահայաստանեան 7 թերթերու մէջ («Ապագայ» Սոնրէալ, «Նոր Օր» Լոս Անճելըս, «Զարթօնք» Պէյրութ, «Մարմարա» Պոլիս, «Արեւ» Գահիրէ, «Նոր Յառաջ» Փարիզ, «Ազատ Օր» Աթէնք): Ասոնցմէ զատ նոյն յօդուածը լոյս տեսած է նաեւ «Ազգ»ի մէջ Երեւան:

Յօդուածին առաջին մէկ երկու հրապարակումներէն յետոյ, անկէ օրինակ մը դրկուեցաւ ՀՀ Սփիւռքի նախարարուհի ազնուափայլ տիկին Հրանուշ Յակոբեանին: Ապա իր հետ հեռաձայնային կապ պահեցի գիտնալու համար թէ ի՛նչ եղաւ յօդուածին արձագանգը:

Տիկին նախարարուհին դիտել տուաւ թէ Սփիւռքի նախարարութիւնը չի զբաղիր այս հարցով, որ կ'իյնայ տերմինաբանական յանձնաժողովին իրաւասութեան ծիրին մէջ:

Հեռաձայնային այս խօսակցութեան ընթացքին, յարգարժան նախարարուհին դիտել տուի, թէ տերմինաբանական յանձնաժողովը ենթադրուած է զբաղիլ նոր երեւոյթներ և ըմբռնումներ բնութագրող նորակերտ բառեր ստեղծելով, մինչդէռ յօդուածը կը քննարկէ արդէն իսկ գոյութիւն ունեցող հայերէն բառերու տեղ անոնց օտար համագօրը գործածելու երեւոյթը:

Տիկին նախարարուհին հաստատ մնաց իր տեսակէտին վրայ, աւելցնելով թէ առաւելագոյնը որ կրնայ ընել, յարմար առիթով յօդուածը հանրապետութեան նախագահին ներկայացնելն է:

Այս խօսակցութենէն քանի մը ամիս յետոյ, Մայիս 2014-ի վերջաւորութեան, Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովին 4-րդ նիստին հետ համատեղ, նոյն նպատակով կազմուած տարածաշրջանային յանձնախումբերու ներկայացուցիչներուն գումարած նիստերուն, Եգիպտոսի յանձնախումբին կողմէ ներկայ գտնուելու համար Երեւան մեկնած ըլլալով, առիթէն օգտուեցայ եւ այցելեցի Հ. Աճառեանի Լեզուի Ինստիտուտ՝ հանդիպելու Ինստիտուտի տնօրէն Տիար Վիկտոր Կատվալեանին, որ հանդիպումին ներկայ գտնուող Ինստի-

տուտի արեւմտահայերէնի բաժնի վարիչ ԳԱԱ թղթակից անդամ Տիար Արտեմ Սարգսեանը հրաւիրեց, որպէսզի ներկայացնէ իրենց բաժնին մէջ կատարուող աշխատանքներու հիմնական ուղղութիւններն ու ծրագիրները:

Խօսակցութեան ընթացքին, Ինստիտուտի տնօրէնին յանձնեցի յօդուածէս օրինակ մը, զոր խոստացաւ ուղղակի հանրապետութեան նախագահին յանձնել՝ այդ օրերուն անոր Լեզուի Ինստիտուտ տալիք հաւանական այցելութեան առիթով:

Երբ հարց տուի տերմինաբանական յանձնաժողովին մասին, Տիար Կատվալեան բացատրեց թէ նման կառոյց մը գոյութիւն ունի, բայց գործօն չէ:

Հարցը այս ձեւով մնաց առկախ:

Կարծէ նշել թէ յօդուածիս մէջ արծարծուած նիւթերը նորութիւն չեն: Ասկէ առաջ ենթակայ եղած են հրապարակային քննարկումի եւ ասկէ վերջ ալ պիտի քննարկուին, ցորքան գործնական եւ ազդու քայլեր չեն առնուիր:

Ասոր փաստը այն է, որ յօդուածը հրատարակուած է տարբեր երկիրներու մէջ լոյս տեսնող հայ մամուլի ութ օրկաններու մէջ, ինչ որ կը վկայէ հրատարակուող նիւթին մնայուն այժմեականութեան մասին:

* * *

Ձեր գրութեան ամփոփիչ վերջաբանին մէջ, քննարկուող հարցը գոյութիւն ունեցող բայց չգործող տերմինաբանական յանձնաժողովին ներկայացնելու Ձեր տեսակէտը յար եւ նման է Սփիւռքի յարգարժան նախարարուհիին կողմէ նախապէս յայտնուած տեսակէտին:

Ուշադիր ընթերցողը պիտի նկատէր թէ յօդուածին մէջ կատարուած նշումները բոլորն ալ կը վերաբերին հայերէնի մէջ արդէն իսկ գոյութիւն ունեցող բայց անտեսուած գեղեցիկ բառերու, որոնց փոխարէն անտեղիօրէն օտար բառեր կը գործածուին:

Ինքզինքս կրկնելու գնով պիտի ուզէի շեշտել թէ յօդուածին մէջ նշուած օրինակները չեն վերաբերիր նոր երևոյթներ և ըմբռնումներ բացատրող նորաստեղծ օտար բառերու հայերէն համագօրը գտնելու:

Ընդհակառակը, բոլոր նշումները կը վերաբերին գոյութիւն ունեցող գեղեցիկ հայերէն բառերու, որոնք երկար տասնամեակներէ ի վեր

գործածուած են, բայց այսօր ականատես կըլլանք անոնց՝ լեզուն դուրս բռնագաղթին եւ զանոնք օտար բառերով փոխարինելու ցաւալի երեւոյթին:

Այս առիթով աւելորդ չեմ նկատեր կրկին նշել ՀՀ-ի կարգ մը նախարարութիւններու օտար անունները, որոնք կակնկալուի որ փոխարինուին իրենց հայերէն համագործնական:

Անունին մաս կազմող

օտար բառ

Սոցիալական
Էկոնոմիկայի
Էներգետիկայի
Սպորտի
Տրանսպորտի
Ֆինանսների

Հայերէն

համագործ

Ընկերային
Տնտեսութեան
Ուժանիւթի
Մարզական
Փոխադրութեան
Ելեւմտական

Այս մասին նախագահական հրամանագրի մը կարիքը գոյութիւն ունի, քանի որ կարելի չէ նախարարութիւններու անունները առանց նման հրամանագրի կամայականօրէն փոխել:

Սակայն յօդուածին մէջ յիշուած այլ օտար բառեր, որոնք ստորեւ ներկայացուած են, կարելի է փոխել գործածելով անոնց իւրաքանչիւրին հայերէն համագործ, առանց նախագահական հրամանագրի կամ տերմինաբանական յանձնաժողովի որոշումներուն:

Օտար բառ

Չէմպիոն
Ֆինանսիստ
Բանկիր
Բանկ
Առողիտորական

Հայերէն համագործ

Ախոյեան
Ելեւմտագէտ, դրամավար
Սեղանաւոր
Դրամատուն
Հաշուետեսական

Այս առիթով կարժէ մէջբերել հետեւեալներուն անունով

ՀՀ Սփիւռքի Նախարարութիւն

ՀՀ ԳԱԱ Նախագահութիւն

ՀՀ ԳԱԱ Լեզուի Ինստիտուտ

«Մեր Լեզուն Մեր Հայրենիքն է» գիտաժողովի մասնակիցներ

մամուլին մեջ լոյս տեսած «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՄԲ՝ ԼԵԶՈՒԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ» խորագրով յայտարարութենէն որոշ հատուածներ, որոնք սերտօրէն կապ ունին մեր շօշափած նիւթին հետ:

ա. ... միշտ յիշել որ (հայրենի պետականութիւնը) մայրենիի պահպանութեան եւ զարգացման գլխաւոր երաշխիքն է:

բ. Սիրել, պահպանել, գործածել, տարածել ու սերնդէ սերունդ փոխանցել հայոց լեզուն...:

գ. Դիմում ենք աշխարհասփիւռ հայ երիտասարդութեան Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ձեր կարեւորագոյն եւ ազգանպաստ գործը համարէք հայերէն սովորելը, հայերէն իմանալը:

դ. ...իմացէք, խօսէք, եւ ՄԱՔՐԱՄԱՔՈՒԻՐ պահէք մեր աստուածային մայրենին:

Սփիւռքի ուղղուած այս գեղեցիկ պատգամներով ինչպէ՞ս կարելի է համոզել սփիւռքահայ պատանիներն ու պարմանուհիները, եթէ անոնք հայրենի այս պատգամները տարածողներուն մատնացոյց ընեն հայրենիքի մեջ պաշտօնական եւ անպաշտօն մակարդակներու վրայ գործածուող օտար բառերու յորձանուտին մեջ խեղդուող աղաւաղուած հայերէնը:

Տեղին պիտի ըլլար նշել թէ օտար բառերը լեզուին մեջ արդէն իսկ առկայ հայերէն համագօրններով փոխարինելը կախում ունի հասարակական կազմակերպութիւններու եւ անհատներու մօտ մայրենիին հանդէպ ունեցած գիտակցութեան եւ նախանձախնդրութեան մակարդակէն: Հետեւաբար, հարկ է նշել որ հայրենի պատկան մարմինները, մայրենիին վերաբերեալ սփիւռքի ուղղուած պատգամներու զուգահեռ, հետամուտ ըլլան հայրենիքի մեջ մայրենին անաղարտ պահելու գիտակցութիւնը եւ նախանձախնդրութիւնը արմատաւորելու եւ զարգացնելու:

Հետաքրքրական է նկատել, որ Ձեր գրութեան եզրափակիչ մասին մեջ, երբ կը խօսիք եզրաբանական յանձնաժողովի կամ խորհուրդի մասին, կը գործածէք հետեւեալ եզրերը՝ **ակտիվ, տերմինաշինութիւն, տերմինաշերտեր, կոնկրետ**, ինչ որ կանխակալ կարծիք կրնայ ստեղծել կազմուելիք եզրաբանական խորհուրդի առաքելութեան յաջողելու հաւանականութեան մասին:

Յուսալով որ շուտով կ'ունենամ ներկայ գրութեան մասին Ձեր կարծիքը:

Յարգանքով և յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝

ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆ

ՏԻԱՐ ՍԵՐԳՕ ԵՐԻՑԵԱՆԻ Բ. ՊԱՏԱՍԽԱՆԸ

Բարև, հարգելի Պերճ Թերզյան

Ձեր նամակի ընթերցումը կրկին բերում է նոր խոհերի և մտորումների՝ մեր ժամանակակից լեզվի և նաև ապագայի հետ կապված: Այո՛, մեր լեզուն անընդհատ մաքրվելու, իր արմատներին մոտիկ գտնվելու անհրաժեշտություն ունի: Եվ դա մենք պետք է անենք: Չէ՞ որ մեր լեզուն անընդհատ զարգացող ու փոփոխվող է: Բայց այդ ճանապարհն այն պիտի անցնի անընդհատ մաքրվելով, եթե անգամ տարիների կամ տասնամյակների ընթացքում այդ ընթացքը չի ունեցել: Ցավոք, շատ դեպքերում անգամ հակառակն է եղել, մեր լեզուն «հարստացել» է ոչ հայեցի բառերով: Ուստի կիսելով Ձեր բոլոր մտահոգությունները, այսօր լեզվի պետական տեսչության իրավասությունների սահմաններում ավելին անել չենք կարող:

Կոնկրետ տերմինների փոփոխություններ ի գործու է անելու միայն տերմինաբանական խորհուրդը, որն օրենսդրական անկատարության պատճառով, ցավոք, չի կարող իր գործունեությունը ծավալել, և դրանով իսկ առաջացող խնդիրներին լուծումներ տալ: Հուսանք, որ այդ տերմինաշինական մարմինը հնարավորինս արագ պիտի սկսի նորից գործել, որ կարողանա քննարկել առաջ եկած խնդիրները, այդ թվում և Ձեր առաջարկությունները:

Այս պահին ավելին ասել և անել չեմ կարող: Հուսամ, որ առաջիկայում Ձեզ հետ առիթ կունենանք հանդիպելու քաղաքամայր Երևանում, և քննարկելու Ձեր կողմից բարձրացված խնդիրները, որովհետև ի դեմս Ձեզ գործ ունենք միշտ մեր ոսկեդենիկ լեզվի ճակատագրով մտահոգ ու հետաքրքրված, ես կասեի՝ տառապող մարդ-անհատականության հետ:

Ընդունեք մեր խորին հարգանքը Ձեր նկատմամբ՝

30.03.2015թ.

Սերգո Երիցյան

ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՄԲ՝ ԼԵԶՈՒԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Հայկական լեռնաշխարհում և նրա սահմաններից դուրս հազարամեակներ շարունակ ապրում է հայերեն խօսքը, և շուրջ 1600 տարի է՝ գործառույթում է գրաւոր հայերենը: Շատ արհաւիրքների միջով է անցել մեր լեզուն, սակայն նրա 36 զինուորները անյաղթ ու կանգուն են:

1915 թուականին երիտթուրքական իշխանութիւնը ծրագրուած և հետեւողականօրէն փորձեց ոչնչացնել մի ամբողջ ազգ և նրա լեզուն: Մէկ դար առաջ կատարուած Ցեղասպանութիւնը միլիոնաւոր հայերի ֆիզիքական բնաջնջումով, տեղահանութեամբ, իր հայրենի հողի վրայ դարերի ընթացքում ժողովուրդի արարած արժէքների ոչնչացումով, խեղեց հայ ժողովուրդի պատմական ճակատագիրը, բեկեց հայութեան զարգացման բնականոն ընթացքը՝ ծանրագոյն վնաս հասցնելով նաեւ մարդկային քաղաքակրթութեանն ու համաշխարհային մշակոյթին: Արդէն հարիւր տարի է, ինչ իւրաքանչիւր հայի հոգում դաջուած են կոտորածների, մշակութային արժէքների անդառնալի ոչնչացման, Հայրենիքի մեծագոյն մասի կորստի տառապագին յիշողութիւնն ու անամոք ցաւի զգացումը:

Վայրենի բնագոյների՝ օսմանեան պետութեան կողմից ուղղորդուող քսումնելի խրախճանքի յորձանուտում, եղեռնագարկ եղաւ նաեւ աշխարհի հնագոյն ու զարգացած լեզուներից մէկը՝ ոսկեղենիկ հայերենը: Աշխարհի երեսից իսպառ անհետացան դարերի ճամբայ անցած, դարաւոր իմաստութիւն ու յիշողութիւն ամբարած տասնեակ հայ բարբառներ, շատ այլ բարբառներ էլ, վտարուելով հայրենի հողից և զրկուելով կենսական պայմաններից, բեկորներով սփռուած են օտար ափերում ու սերնդից սերունդ մոռացութեան են մատնուում այլախօս միջավայրերում: Ծաղկուն ու շքեղ գրական արեւմտահայերէնը, զրկուած լինելով իր Հայրենիքում գոյատեւելու և գործառելու հնարաւորութիւնից, թելը զարկուած հաւքի նման դեգերում է աշխարհից աշխարհ՝ որոնելով ու չգտնելով տունդարձի ճամբան:

Առանձնայատուկ ընդգծելով այն իրողությունը, որ Հայոց Ցեղասպանության արդիւնքում հայերէնը եւս ծանրագոյն կորուստներ է կրել, լեզուասպան եղել և գրկուել է միասնական զարգացման իր բնական իրաւունքից և հնարատրութիւնից՝ մենք դատապարտում ենք մարդկանց զանգուածային ոչնչացման, մշակութային արժէքների կործանման ցանկացած դրսեւորում, միանում ենք Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրին, միաժամանակ կոչ անում բոլոր ժողովուրդներին ու երկրներին՝ յարաբերութիւնները կառուցել միմիանց իրաւունքները յարգելու և փոխըմբռնման հիմքի վրայ, բացառել բոլոր կարգի բռնութիւնները, ջանքեր գործադրել ոչ թէ միմիանց նկատմամբ յաղթանակի հասնելու և պատերազմելու միջոցներ ստեղծելու և եղածները կատարելագործելու, այլ համամարդկային բարօրութեան և համերաշխութեան հասնելու ուղղութեամբ:

Դիմում ենք նաեւ աշխարհի բոլոր հայերին և խնդրում ու յորդորում՝

- ա) համախմբուել հայրենի պետականութեան շուրջ և ամէն կերպ նպաստել նրա զարգացմանն ու հզօրացմանը, միշտ յիշել, որ այն մեր մայրենիի պահպանութեան և զարգացման գլխաւոր երաշխիքն է, իւրաքանչիւր հայի Հայրենիքը Հայաստան աշխարհն է:
- բ) սիրել, պահպանել, գործածել, տարածել ու սերնդէ սերունդ փոխանցել հայոց լեզուն՝ այդպիսով մեծագոյն նպաստ բերելով հայապահպանութեան և ազգային իղձերի իրականացման գործին:

Դիմում ենք աշխարհասփիւռ հայ երիտասարդութեանը.

«Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ձեր կարելորագոյն և ազգանպաստ գործը համարեք հայերէն սովորելը, հայերէն իմանալը: Թող դա լինի ձեր հիմնական, իրական ներդրումը՝ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին մեր սուրբ նահատակների ոգեկոչման, համայն հայութեան համախմբման և հզօրացման սուրբ գործում»:

Մեծ անգլիացին՝ Պայրոնը ասել է. «Աստուծոյ հետ խօսելու միակ

լեզուն հայերենն է»: Ուրեմն իմացե՛ք, խօսե՛ք և մաքրամաքուր պահե՛ք մեր աստուածային մայրենին:

ՀՀ Սփիւռքի նախարարություն

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ՀՀ ԳԱԱ լեզուի ինստիտուտ

«Մեր լեզուն մեր Հայրենիքն է» գիտաժողովի մասնակիցներ

Յ.Գ. Փետրուար 21-ը ԵՈՒՆԵՍԳՕ-ի կողմէ ճանչցուած է որպէս Մայրենիի Օր, հայ ժողովուրդը այդ օրը կը նշէ Հայերէնի Օրը:

Ծանօթ. - Այս յայտարարութիւնը ամբողջութեամբ կը տրուի հոս՝ ընթերցողին լրացուցիչ տեղեկութիւն տալու մտահոգութեամբ, քանի որ այս գրքոյկին չորրորդ գլուխին մէջ (Հեղինակին պատասխանը - էջ 27) ակնարկուած է անոր եւ մէջբերումներ կատարուած են անկէ:

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳԻՐՔԵՐԸ ԵՒ ԳՐՔՈՅԿՆԵՐԸ

2008 ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՅԵԱՅՔՆԵՐ Պատմության, Քաղաքականության եւ Մշակութային Ժառանգության Մասին (արաբերէն)	308 էջ
2009 Ինչպէ՞ս Տօնուեցաւ Հայ Պարբերական Մամուլի 200-ամեակը Գահիրէի Մէջ	24 էջ
2010 Անտէղի Պատիւի Մը Շոյալումին Առիթով	12 էջ
2010 ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ - Յօդուածներու Ժողովածոյ	316 էջ
2011 Տեղեկագիր Գալուստեան Եւ Նուպարեան Վարժարաններու 1989-ին Վաւերացուած Կանոնագիրներուն Մասին	24 էջ
2012 Գահիրէի ՀԲԸՄ-ի Սաթենիկ Չազըր Հիմնադրամի Հրատարակչական Գործունէութիւնը	44 էջ
2012 ՀՀ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԾՆՆԴՈՅԸ - Ակնարկ 20-ամեայ Հեռաւորութենէ	92 էջ
2014 «ԱՐԵԻ»Ի ԱՐԱԲԵՐԷՆ ԱՄՍՕՐԵԱՅ ՅԱԻԵԼՈՒԱԾԸ	132 էջ
2014 ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ՈՐ ԱՆԿ Է	60 էջ

المؤلف: بيرج ترزيان

الكتاب : نداء من القلب

من أجل اللغة الارمنية

الناشر : المؤلف

الطبعة : الأولى ٢٠١٥

المطبعة : المطبعة الافريقية ش.م.م

رقم الايداع : ٢٠١٥/١٥٥١٨

الترقيم الدولي : 9 - 3338 - 90 - 977 - 978

HEARTFELT APPEAL for the Armenian Language

Cairo - 2015

Այս գիրքը ունենալ փափաքողներին կը խնդրուի
դիմել հեղինակին հետեւեալ հասցեով՝

africanpress@hotmail.com

